ԿԱՐԾԻՔ

Սաթենիկ Հովհաննեսի Դանիելյանի՝ «Դեռահասության ճգնաժամը և սեռային ինքնահաստատման առանձնահատկությունները» թեմայով ԺԹ.00.03 Սոցիալական հոգեբանություն մասնագիտությամբ հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսական աշխատանքի վերաբերյալ

Մերօրյա հասարակությունը մեծ ազդեցություն է թողնում յուրաքանչյուր անհատի վրա՝ միաժամանակ դառնալով նաև նպաստող գործոն դեռահասների այս կամ այն առանձնահատկությունների դրսևորման համար: Դեռահասությունն կենսաբանական, հոգեբանական, վարքային փոփոխություններով պայմանավորված անձի զարգացման կարևորագույն փուլերից է, ճգնաժամային համարվող տարիք: Այն սովորաբար բնութագրվում է որպես բեկումնային, անցումային, կրիտիկական, բայց ավելի հաճախ՝ որպես սեռական հասունության փուլ, քանզի կենսաբանական փոփոխությունները իրենց հզոր ազդեցություն են թողնում հոգեկանի զարգացման վրա: Դեռահասության ճգնաժամի հիմնախնդրին անդրադարձել են տարբեր հոգեբան տեսաբաններ՝ Զ. Ֆրեյդը, Ա. Ֆրոյդը, Է. Էրիքսոը, Շ. Բյուլերը, Հ.Վալոնը, Կ. Լևինը, Լ. Վիգոտսկին, Լ. Բոժովիչը, Կ. Պոլիվանովան, Ս. Խուդոյանը և ուրիշներ՝ ճգնաժամը դիտարկելով տարբեր տեսանկյուններից: Թերևս ոչ մի այլ շրջափուլ այնքան հետազոտված չէ, որքան այս շրջափուլը, սակայն դեռ շատ հիմնախնդիրներ իրենց լուծումներն են պահանջում:

Տվյալ հետազոտության արդիականությունը հեղինակը հիմնավորում և պայմանավորում է նրանով, որ շատ հետազոտողներ կարևորում են սեռական հասունացման դերը ճգնաժամի առաջացման գործում, սակայն հիշյալ ենթադրությունը բավարար էմպիրիկ հետազոտության չի ենթարկվել, մասնավորապես հետազոտության չի ենթարկվել այն, թե ինչ դեր է խաղում սեռային

ինքնահաստատումը դեռահասության ճգնաժամի առաջացման գործընթացում: Ինչպես շատ հեղինակներ, նա ճգնաժամի դրսևորումը դիտարկում է որպես սուբյեկտիվ գործընթաց՝ և՝ դրսևորման ժամանակահատվածի, և՝ տևողության, և՝ դրսևորման առանձնահատկություններով: Ըստ Ս.Դանիելյանի, հետազոտության հրատապությունը կարևորվում է նաև կիրառական տեսանկյունից, ինչը հնարավորություն է տալիս ավելի լավ հասկանալու ճգնաժամի ընթացքում սեռային ինքնահաստատման դերը, դեռահասների հոգեբանական խորհրդատվության, հոգեթերապիայի կազմակերպման գործում:

Ատենախոսն առանձին անդրադառնում է «ինքնահաստատում» հոգեբանական եզրույթին և ինչպես այլ հեղինակներ, դիտարկում այն անձի մակարդակում որպես կարևորագույն կառույց, պահանջմունք, հատկապես սոցիալական փոխհարաբերություններում: Ս. Դանիելյանը կանգ է առնում նաև «սեռային ինքնահաստատում» հասկացության վրա, գտնում, որ հիշյալ եզրույթը գրեթե բացակայում կամ հազվադեպ է հանդիպում հոգեբանական բառարաններում: Հեղինակը հիմնավորում է նաև, որ հիշյալ հիմնախնդիրը տարիքային, հոգեբանական հետազոտության տեսակետից գրեթե հետազոտված չէ: Ատենախոսը մասնավորապես շեշտադրում է, որ դեռահասության տարիքը, որը սեռային ինքնագիտակցության, վարքի ու հարաբերությունների ձևավորման, սեռային դերերի յուրացման և հատկապես սեռային ինքնահաստատման կարևորագույն զարգացման շրջան է, նույնպես հետազոտված չէ: Ատենախոսը կարևորում է ինքնահաստատման ընդհանուր և մասնավոր դրսևորումները՝ տեսակներն ըստ ոլորտների, դիցուկ՝ սեռային ինքնահաստատում, մասնագիտական ինքնահաստատում և այլն,դիտարկում է որպես «իր և ուրիշների աչքերում սեփական անձի արժևորում, սեռային առումով որոշակի ստատուսի ձեռքբերում, վերաբերմունքի ձևավորում»: Հետազոտողը գտնում է, որ կապ կա ինքնագնահատականի և ինքնահաստատման ձգտման ինտենսիվության միջև, նշանակալիություն է տեսնում նաև ինքնագնահատականի կայունության և անկայունության միջև՝ հիմնավորելով, որ որքան ավելի անկայուն է

սեռային ինքնագնահատականը այնքան ավելի ինտենսիվ է ինքնահաստատման ձգտումը և հակառակը:

Հեղինակը դիտարկում է, որ սեռային ինքնահաստատումը կարող է դրսևորվել ինչպես վարքով, այնպես էլ խոսքով, առանձնացնում է սեռային տարբերությունները, կարևորում դրանց դերը միջանձնային հարաբերություններում:

Անդրադառնալով ինքնահաստատման պահանջմունքի ֆրուստրացիային՝ Ս.Դանիելյանը կարծում է, որ այն հանդես է գալիս որպես իգական կամ արական սեռի արժանապատվությանն ուղղված հարված, առանձնացնում ֆրուստրացվածության մակարդակը, առաջարկում կիրառելի դարձնել և օգտագործել «ֆրուստրացիայի շեմ» հասկացությունը, դիտարկելով այն որպես պահանջմունքների անբավարարվածության մակարդակ, որից այն կողմ ի հայտ են գալիս և արտահայտվում ֆրուստրացիայի նշանները: Ըստ հեղինակի, դեռահասության ճգնաժամը կապված է նաև այդ շրջանում ինքնագիտակցության նոր մակարդակի առաջացմամբ, ինչի բնորոշ գծերից է ինքնաճանաչումը: Սակայն նորմատիվ տարիքային ճգնաժամը չի կարող պայմանավորված լինել ընդհանրապես ինքնահաստատման ֆրուստրացիայով, այն պետք է պայմանավորված լինի տվյալ տարիքին բնորոշ զարգացման որոշակի սթրեսոգեն օրինաչափությամբ: Սեռային ինքնահաստատման ֆրուստրացիան հանգեցնում է հուսահատության, ինքնագնահատականի՝ հետևաբար նաև հավակնությունների մակարդակի անկման: Այլ կերպ՝ դեռահասության ճգնաժամի առաջացման պատճառահետևանքային շղթայում սեռային ինքնահաստատման պահանջմունքի ֆրուստրացիան միջանկյալ դիրք է գրավում սեռային ինքնագիտակցության ի հայտ գալու և տարիքային խնդիրների լուծման դժվարությունների միջև: Սեռային ինքնահաստատման պահանջմունքի ակտուալացումը պայմանավորված է սեռային ինքնագիտակցության առաջացմամբ, բուն ինքնագիտակցության արթնացումը ճգնաժամ չի կարող առաջացնել, այն դրսևորվում է նոր ես–կոնցեպցիայի ձևավորման դժվարությունների

արդյունքում, որոնցից ամենանշանակալին ինքնահաստատման անհաջողություններն են և ֆրուստրացիան:

Հիմնվելով Ս. Խուդոյանի անձի զարգացման ֆունկցիոնալ տեսության և ինքնահաստատման տեսակների ու տարիքային առանձնահատկությունների հայեցակարգերի վրա՝ հեղինակը դեռահասության ճգնաժամի նորամուծությունը կապում է սեռային ինքնահաստատման պահանջմուքի ֆրուստրացիայի հետ:

Հիմնվելով մասնագիտական գրականության վերլուծության վրա՝ հեղինակն հետազոտության շրջանակներում առանձնացրել և փորձարարական հետազոտության է ենթարկել դեռահասության ճգնաժամի դրսևորումները, ընթացքի առանձնահատկությունները, սրությունը և դրա հիման վրա դասակարգել դեռահասներին ըստ ճգնաժամի ընթացքի առանձնահատկությունների, էմպիրիկ ճանապարհով բացահայտել ինքնահաստատվածության մակարդակները և ֆրուստրացվածությունը: Ստացված արդյունքները ենթարկվել են քանակական, որակական և համեմատական վերլուծության՝ պարզելով դեռահասների ինքնահաստատվածության, մասնավորապես սեռային ինքնահաստատվածության մակարդակը և այդ պահանջմունքի ֆրուստրացիան ազդում են դեռահասության ճգնաժամի ընթացքի վրա: Դիտարկվել է, որ դեռահասության ճգնաժամը դրսևորվում է պասիվությամբ, դեպրեսիայով, տագնապներով և ագրեսիվ վարքով: Սուր ճգնաժամի դեպքում դեռահասները նախընտրում են ինքնահաստատման դեստրուկտիվ ոճը, մեղմ ընթացքի դեպքում՝ կոնստրուկտիվ, միջին ընթացքի դեպքում՝ դեստրուկտիվ և կոնստրուկտիվ ինքնահաստատման ոճերը գրեթե հավասար են:

Էմպիրիկ հետազոտությունը հեղինակը իրականացրել է երեք փուլով: Ընտրանք են կազմել Վրաստանի Բաթումի քաղաքի հրեական Խեսեդ Ցվի կազմակերպության և Սուրբ Փրկիչ հայկական եկեղեցու Մեսրոպ Մաշտոցի անվան

կրակնօրյա դպրոցների 11-16տարեկան 178 (84 տղա և 94 աղջիկ) դեռահաս սաներ տարբեր հայ, ռուս, վրացի, հրեա ազգություններից:

Աշխատանքը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից, 12 նկարից, 15 դիագրամից և 114 անուն գրականության ցանկից, հավելվածից:

Այս ամենի հետ մեկտեղ, հարկ է նշել, որ աշխատանքում կան վիճահարույց հարցեր և բացթողումներ.

1. Ատենախոսությունը ծավալուն է և բազմաբովանդակ, սակայն ցանկալի կլիներ, որ հեղինակի կողմից առավել ընդգրկուն և բազմաբովանդակ ներկայացվեր արդիականությունը:

2. Աշխատանքի Ներածությունում և Սեղմագրում բացակայում են հիմնախնդրի մշակվածության աստիճանը և ընտրանք բաժինները:

3. Ատենախոսության երրորդ գլխում հետազոտության ընտրանքը ներկայացվում է 178 (84 տղա և 94 աղջիկ) դեռահասներով (էջ 57), 3.2.1. ենթագլխում (էջ 60) հեղինակը զրույցի մեթոդն անց է կացնում 34 (14 տղա և 20 աղջիկ) դեռահասի հետ (էջ 57), հաջորդ 3.2.3. ենթագլխում (էջ 75) հեղինակը էմպիրիկ հետազոտության է ենթարկում 118 դեռահասի,որոնցից 85-ը մասնակցել են նախորդ հետազոտություններին, իսկ 33-ը նոր են ընդգրկվում: Հիշյալ պատկերը խախտում է հետազոտության սկզբունքը, ինչը հնարավորություն չի ընձեռում ամբողջական պատկերացում կազմելու հետազոտության ընտրանքի վերաբերյալ:

4. Ատենախոսության երեք գլուխներն անհամաչափ են բաշխված, մասնավորապես՝ երկրորդ գլխի 2.5 ենթագլուխը և երրորդ գլխի ենթագլուխները

կարող էին միավորվել պահպանելով համաչափությունը, քանզի ցանկալի չէ յուրաքանչյուր կիրառված մեթոդիկան ենթագլուխ անվանել:

5. Աշխատանքում առկա են նաև տեխնիկական վրիպակներ: Հավելված հատվածը համարակալված է: Առկա են նյութի կրկնվող հատվածներ (էջ 5 և 56, էջ5 և 53 և այլն), էջ 85-ում տեղադրված է Լ.Ի. Վասերմանի հարցարանը,նույն հարցարանը երևում է նաև հավելվածում (էջ 126):

Կարծում ենք նշված դիտողությունները չեն նսեմացնում աշխատանքի արժեքը, քանի որ ատենախոսն իրականացրել է բավականին ծավալով տեսական վերլուծություն և փորձարարական հետազոտություն:

Ատենախոսությունը գիտական պատշաճ, մակարդակով գրված հոգեբանական աշխատություն է, իր բովանդակությամբ և ձևակերպումներով համապատասխանում է Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանների շնորհման կարգի 7-րդ կետի՝ գիտության տվյալ բնագավառում կարևոր խնդրի լուծում պահանջին, իսկ հեղինակը՝ իսկ հեղինակը՝ Սաթենիկ Հովհաննեսի Դանիելյանն արժանի է հոգեբանական գիտությունների թեկնածուի աստիճանի շնորհմանը՝ ԺԹ.00.03 Սոցիալական հոգեբանություն մասնագիտությամբ:

Պաշտոնական ընդդիմախոս,

Հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ՝ Լ.Ռ. Արամյան

Լ. Ռ. Արամյանի ստորագրությունը հաստատում եմ

Գիտական քարտուղար, մ.գ.թ., դոցենտ՝ Մ.Մ.Իսպիրյան

10.01.2024թ.